հայտի լրացման ուղեցույց

ո՞վ կարող է մասնակցել «Պատմության մրցույթին»

Պատմության մրցույթին կարող են մասնակցել նախագծում ընդգրկված ուսուցիչների կողմից ձևավորված աշակերտական խմբերը / խմբերի անդամ աշակերտները:

քանի՞ հայտ կարող է ներկայացնել յուրաքանչյուր խումբ

Յուրաքանչյուր մասնակից (թիմ կամ անհատ) կարող է ուղարկել միայն մեկ հայտ: Եթե թիմը ներկայացնում է խմբային աշխատանք, թիմի յուրաքանչյուր անդամ կարող է նաև առանձին անհատական աշխատանք ներկայացնել:

ինչպե՞ս ներկայացնել հայտը

Պատմության մրցույթին մասնակցելու համար հարկավոր է լրացնել այս առցանց հայտը: Այլ տարբերակներով ուղարկված աշխատանքները չեն ընդունվի:

Անհրաժեշտ է լրացնել բոլոր վանդակները համապատասխան տվյալներով: Չլրացված կամ կիսատ լրացված հայտերը չեն ընդունվի:

ինչպե՞ս ներբեռնել աշխատանքները

Բուն հետազոտական նախագիծը պետք է ներկայացնել՝ սեղմելով **«ներբեռնել աշխատանքը»** վանդակի վրա և կցելով աշխատանքը: Ուշադրություն դարձրե՛ք, որ հնարավոր է կցել word, pdf, ppt և jpeg ձևաչափով նյութեր՝ **առավելագույնը 5 ՄԲ ծավալով**:

Եթե աշխատանքը ***շարադրություն / հոդված / էսսեյ է*** կամ ***սահիկահանդես***, ապա կարող է կցվել բուն աշխատանքը, եթե ծավալը չի գերազանցում 5 ՄԲ: Եթե շարադրությունը ծավալով գերազանցում է 5 ՄԲ (օրինակ՝ ներառված են լուսանկարներ), ներբեռնե՛ք ամբողջ աշխատանքը որևէ ամպային հարթակ (օրինակ՝ google drive), հղումը տեղադրե՛ք word փաստաթղթի մեջ և այն ներբեռնե՛ք «ներբեռնել աշխատանքը» վանդակում:

Եթե աշխատանքը ***ֆոտո պատմություն է***, ներբեռնե՛ք ամբողջ աշխատանքը որևէ ամպային հարթակ (օրինակ՝ google drive), հղումը տեղադրե՛ք word փաստաթղթի մեջ և այն ներբեռնե՛ք «ներբեռնել աշխատանքը» վանդակում:

Եթե աշխատանքը ***վիդեո-պատմություն է***, ներբեռնե՛ք աշխատանքը Youtube հարթակում կամ որևէ ամպային հարթակ (օրինակ՝ google drive), հղումը տեղադրե՛ք word փաստաթղթի մեջ և այն ներբեռնե՛ք «ներբեռնել աշխատանքը» վանդակում:

Եթե աշխատանքը ***փողքասթ է,*** հղումը տեղադրե՛ք word փաստաթղթի մեջ և այն ներբեռնե՛ք «ներբեռնել աշխատանքը» վանդակում։

Եթե աշխատանքը ***դերախաղ / ներկայացում է***, նկարահանե՛ք ներկայացումը, վիդեոն տեղադրե՛ք Youtube հարթակում կամ որևէ ամպային հարթակում (օրինակ՝ google drive), հղումը տեղադրե՛ք word փաստաթղթի մեջ և այն ներբեռնե՛ք «ներբեռնել աշխատանքը» վանդակում։

Եթե աշխատանքը ***պոստեր է***, անհրաժեշտ է լուսանկարել այն այնպես, որ լինի որակյալ լուսանկար և բոլոր հատվածները հստակորեն երևան, ներբեռնել լուսանկարը առցանց հայտադիմումի համապատասխան բաժնում (եթե ծավալը մինչև 5ՄԲ է) կամ որևէ ամպային հարթակում (օրինակ՝ google drive), հղումը տեղադրել word փաստաթղթի մեջ և այն ներբեռնել «ներբեռնել աշխատանքը» վանդակում։